# ՎՐԱՍՏԱՆ

«ვრასტანი» (საქართველო) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 87 - 88 (16992) ՇԱԲԱԹ 6 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2021 Թ. ԳԻՆԸ՝ 40 ԹԵՏՐԻ


ԳԼԱԶԳՈ. ՄԱԿ-Ի ԿԼԻՄԱՅԻ ՀԱՐՑԵՐԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎ

## ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ՎՐԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՄՇԱԿԵԼ Է 2030 ԹՎԱԿԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ, ՈՐԸ ՀԱՄԱՀՈՒՆՉ Է ՄԱԿ-Ի ՕՐԱԿԱՐԳԻՆ»

### «ԿՈՎԿԱՍԸ ԱՐԴԵՆ ԿՈՐՑՐԵԼ Է ՍԱՌՑԱԴԱՇՏԵՐԻ 40 ՏՈԿՈՍԸ»

*Նոյեմբերի 1-ին Մեծ Բրիտանիայի Գլազգո քաղաքում աշխատանքը սկսեց ՄԱԿ-ի 2021 թվականի կլիմայի փոփոխության 26-րդ համաժողովը, որին մասնակցում են շուրջ 120 երկրների ղեկավարներ:*




Այլ պետությունների ղեկավարների թվում, համաժողովի մասնակիցների առջեւ ելույթ ունեցավ նաեւ Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին: Իր խոսքում, Վրաստանի կառավարության ղեկավարը համաժողովի ուշադրությունը բեւեռեց կլիմայի փոփոխությունների դեմ ուղղված երկրի կառավարության գործունեության, առաջիկա ծրագրերի եւ միջազգային հանրության հետ սերտ համագործակցությամբ կլիմայի հնարավոր փոփոխությունների հետեւանքների վերացման հարցերի վրա:

- Կովկասը իր գեղեցիկ լեռներով, սառցադաշտերով ու գետերով արդեն կորցրել է սառցադաշտերի 40 տոկոսը: Միայն վերջին երկու տասնամ-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

## ՍԱԼՈՄԵ ԶՈՒՐԱԲԻՇՎԻԼԻ. «ԲԵՎԵՌԱՑՈՒՄԸ ԿԱՐԵԼԻ Է ՀԱՂԹԱՀԱՐԵԼ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՄԲ»



*Նոյեմբերի 3-ին, Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին հանդես եկավ հատուկ հայտարարությամբ, որտեղ նախագահը ներկայացրեց իր դիրքորոշումը կորոնավիրուսով պայմանավորված իրավիճակի, համավարակի արդյունքում ստեղծված տնտեսական բարդությունների, տեղական ընտրությունների արդյունքների եւ դրանց արդյունքում երկրում քաղաքական իրադարձությունների զարգացման, Վրաստանի երրորդ նախագահի համաներման հարցերով:*

### ԾԱԳԱԾ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ ՉԵՆ

Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին, իր հայտարարության մեջ հատուկ ընդգծեց,

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

# «ՎՐԱՍՏԱՆԸ» 100 ՏԱՐԵԿԱՆ Է

### ԻՄ ՄԵԾ ԲԱՐԵԿԱՄ «ՎՐԱՍՏԱՆԻՆ»

Իմ մեծ բարեկամ, վրացական հողի վրա ծնված հայալեզու «Վրաստան» թերթը հոբելյար է: Լրացավ պարբերականի 100 տարին: Թերթն անգնահատելի առաքելություն ունի ոչ միայն Վրաստանի հայալեզու բնակիչների, այլեւ մեր ողջ երկրի առջեւ եւ, ամենակարեւորը, վրաց-հայկական հարաբերությունների, մեր ժողովուրդների միջեւ առավել փոխըմբռնման բարեկամության եւ եղբայրական հարաբերությունների խորացման գործում: Այս բարդ մարտահրավերները «Վրաստանը» հաղթահարում է, ինչը նշանակալիորեն պայմանավորված է նրա գլխավոր խմբագիր պարոն Վան Բայբուրթյանի գործադրած ջանքերով, բարձր արհեստավարժության եւ անձնական հատկություններով:



ԻՐՄԱ ՍՈԽԱՁԵ

(Շարունակությունը՝ 5-րդ էջում)

### ՄԵՐ ԹԵՐԹԸ ՆԱԵՎ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ Է ՄԵՐ ԾՆՈՂՆԵՐԻՑ

«Վրաստան» թերթը սիրելն ու ընթերցելը, այն ընտանիքի անդամ դարձնելը, կարծում եմ, նախեւառաջ, հայրենասիրություն է, եթե հաշվի առնենք հատկապես այն, որ միակն է որպես հայկական, որը Վրաստանում ապրում է արդեն հարյուր տարի: Մեր թերթը նաեւ ժառանգություն է մեր ծնողներից: Ուստի նոր սերունդների կողմից նրա անտեսումը, առնվազն անտարբերություն է ոչ միայն ազգի, մայրենիի, համայնքի, այլեւ ընտանեկան բարքերի հանդեպ: Համոզված եմ, որ շատերն են այդպես մտածում, եւ մեզանից յուրաքանչյուրը թերթի հերթական համարի հետ հաստատ մտաբերում է տատ ու պապին, կամ հորն ու մորը՝ թերթը ձեռքին:



ՍԱՄՎԵԼ ԽՈՒՄԱՐՅԱՆ

(Շարունակությունը՝ 5-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

## ԸՆԴԳԾՎԵԾ ԵՐԿԿՈՂՄ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՐՁՐ ԴԻՆԱՄԻԿԱՆ

### ՎՐԱՍՏԱՆԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՅՑԸ ՀԱՅԱՍՏԱՆ

*Նոյեմբերի 2-3-ին, Վրաստանի պաշտպանության նախարար Ջուանշեր Բուրճուլաձեն երկօրյա պաշտոնական այցով գտնվում էր Հայաստանում:*



Այցի շրջանակներում, Վրաստանի պաշտպանության նախարարը հանդիպում ունեցավ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի հետ: Իսկ մինչ այդ, Ջուանշեր Բուրճուլաձեն իր հայ գործընկեր Արշակ Կարապե-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

## ՎՐԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

*Նոյեմբերի 4-5-ին, պաշտոնական այցով Հայաստանում էր գտնվում Վրաստանի սահմանադրական դատարանի նախագահ Մերաբ Թուրնավայի գլխավորած պատվիրակությունը: Այցի շրջանակներում, Վրաստանի սահմանադրական դատարանի նախագահը հանդիպում ունեցավ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի հետ, բանակցություններ վարեց իր հայ գործընկերոջ՝ Արման Դիլանյանի հետ:*

Հայաստանի կառավարությունում կայացած հանդիպմանը, Նիկոլ Փաշինյանը կարեւորեց երկու երկրների Սահմանադրական դատարանների միջեւ համագործակցության զարգացումն ու փորձի փոխանակումը՝ հաշվի առնե-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՏԵՂԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## ԿԱԽԱ ԿԱԼԱՁԵՆ ՎԵՐԸՆՏՐՎԵԾ ԹԲԻԼԻՍԻԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ

*Հոկտեմբերի 30-ին, Թբիլիսիում անցկացված տեղական ինքնակառավարման մարմինների՝ քաղաքապետի ընտրությունների երկրորդ փուլի արդյունքներով Թբիլիսիի քաղաքապետի ընտրություններում հաղթել է «Վրացական երազանքի» թեկնածու Կախա Կալաձեն:*



Կենտրոնական ընտրական հանձնաժողովի տվյալներով, Կախա Կալաձեն ստացել է ընտրությունների մասնակիցների ձայների 55,607 տոկոսը, իսկ նրա մրցակից, «Միասնական ազգային շարժման» թեկնածու Նիկա Մելիան՝ 44,393 տոկոսը:

Նշենք, որ Թբիլիսիում ընտրությունների երկրորդ փուլին մասնակցել է գրանցված ընտրողների 47,7 տոկոսը՝ 478 642 ընտրող:

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

## ՄԵԼՔՈՆ ՄԱԿԱՐՅԱՆԸ ՍՏԱՆՁՆԵԾ ԱԽԱԼՔԱԼԱՔԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

*Հոկտեմբերի 29-ին, Ախալքալաքի մունիցիպալիտետի քաղաքապետարանում, մունիցիպալիտետի նորընտիր քաղաքապետ Մելքոն Մակարյանը հանդիպեց տեղական ինքնակառավարման մարմնի աշխատակիցներին:*



Միջոցառմանը ներկա էին Սամցխե-Ջավախեթիի տարածաշրջանում պետական լիազոր-

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ԳԼԱԶԳՈ. ՄԱԿ-Ի ԿԼԻՄԱՅԻ ՀԱՐՑԵՐԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎ

# ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ՎՐԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՄՇԱԿԵԼ Է 2030 ԹՎԱԿԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ, ՈՐԸ ՀԱՄԱՀՈՒՆՉ Է ՄԱԿ-Ի ՕՐԱԿԱՐԳԻՆ»

## «ԿՈՎԿԱՍԸ ԱՐԴԵՆ ԿՈՐՑՐԵԼ Է ՍԱՌՑԱԴԱՇՏԵՐԻ 40 ՏՈԿՈՍԸ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

յակում Արեւելյան Վրաստանում կորուստների տեմպերը գերազանցել են 20-րդ դարավերջի կանխատեսումները,- հայտարարեց Իրակլի Ղարիբաշվիլին:

Նրա խոսքով, Վրաստանը կիսում է այն ահազանգը, որը ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարը ներկայացրել է՝ Կլիմայի փոփոխության միջկառավարական հանձնաժողովին, եւ որը նկարագրում է որպես «մարդկության համար արտասովոր, անմիջական սպառնալիք»:

- Մարտահրավերները պարզ են, դրանց լուծման ուղիները՝ քաջ հայտնի: Վրաստանը պարտավորվել է, մինչեւ 2030 թվականը, 1990 թվականի մակարդակի համեմատ, կրճատել ջերմոցային գազերի արտանետումներն ավելի քան կեսով, եւ բարձրացնել իրազեկությունը կլիմայի փոփոխությանը հարմարվելու հնարավորության մասին միջազգային գործընկերությունների միջոցով: Վրաստանի կառավարությունն ունի 2030 թվականի զարգացման հստակ եւ հակիրճ ծրագիր, որը լիովին համահունչ է ՄԱԿ-ի 2030 թվականի Կայուն զարգացման օրակարգին,-նշեց Վրաստանի կառավարության ղեկավարը՝ հավելելով, որ Վրաստանը կհասնի իր նպատակին՝ դիվերսիֆիկացվելով դեպի վերականգնվող էներգիայի հատված՝ ավելացնելով հողմային եւ արեգակնային էներգիայի մասնաբաժինն ընդհանուր էներգետիկ շուկայում, վերափոխելով երկրի քաղաքային շարժունակությունը:

- Շինարարության, արդյունաբերության եւ թափոնների կառավարման ոլորտներում ցածր ածխածնային մոտեցումների ներդրում. կլիմայական պայմաններին հարմարեցված տեխնոլոգիաների եւ ծառայությունների մշակմամբ: Վրաստանի անտառների ածխածնի որսալու կարողության մեծացմամբ,- ընդգծեց Իրակլի Ղարիբաշվիլին:

Անդրադառնալով կլիմայի փոփոխություններով պայմանավորված գլոբալ մարտահրավերի հաղթահարման հարցին, Վրաստանի վարչապետը, կարեւորելով համագործակցության անհրաժեշտությունը, նշեց, որ այս ամենը հնարավոր չէ հաղթահարել առանձին-առանձին:

- Ցանկացած երկրի եւ տարածաշրջանի բոլոր համայնքների կառավարությունների, արդյունաբերության, գիտության, ոլորտի մասնագետների, տեխնիկական փորձագետների եւ շահագրգիռ կողմերի ղեկավարները պետք է միասին աշխատեն կլիմայական ճգնաժամը լուծելու եւ ցածր ածխածնային ու կայուն տնտեսական դիրքեր ստեղծելու համար: Փոքր ու մեծ քաղաքներում եւ գյուղերում այսօր բոլորս պետք է խոստանանք մեր երիտասարդությանը եւ գալիք սերունդներին, որ հոգ կտանենք երկիր մոլորակի մասին՝ այն պահպանելու համար: Սա քննարկման ենթակա չէ, եւ մենք պարտավոր ենք գործել,- հայտարարեց Իրակլի Ղարիբաշվիլին:

Գլազգոյում Վրաստանի վարչապետը, համաժողովի շրջանակներում, հանդիպում ունեցավ Նիդերլանդների Թագավորության վարչապետ Մարկ Ռյուտեի, Սլովենիայի վարչապետ Յանեշ Յանսայի հետ:



### ԻՐԱՆ
### ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ԳՈՐԾԱՐՔԻ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿՎԵՐՍԿՍՎԵՆ

*Իրանական կողմը նոյեմբերի 29-ին Վիեննայում կվերսկսի իրանական միջուկային գործարքի վերաբերյալ Գործողությունների համատեղ համապարփակ ծրագրի (ԳՀՀԾ) շուրջ բանակցությունները: Այդ մասին տեղեկացրել է Իրանի ԱԳ նախարարությունը:*

*ԵՄ-ի արտաքին քաղաքական ծառայությունն իր կողմից տարածել է մամուլի տեղեկագիր, որտեղ հաստատել է այդ ամսաթիվը: Այնտեղ ճշտել են, որ բանակցություններին կմասնակցեն Չինաստանի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Ռուսաստանի, Մեծ Բրիտանիայի եւ Իրանի ներկայացուցիչները:*

### ՌՈՒՍԱՍՏԱՆ-ԲԵԼԱՌՈՒՍ
### ՍՏՈՐԱԳՐՎԵՑ ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԻՆՏԵԳՐՄԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐ

*Նոյեմբերի 4-ին Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը եւ Բելառուսի նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոն ստորագրել են Միութենական պետության ինտեգրման հրամանագիրը: Այդ փաստաթուղթը հաստատում է Միութենական պետության ստեղծման մասին պայմանագրի 2021-2023 թվականների դրույթների իրականացման հիմնական ուղղությունները եւ 28 ծրագրերը:*

### ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ
### ՆՈՐ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐ՝ ԲԵԼԱՌՈՒՍԻ ԴԵՄ

*Եվրոպական միությունը մտադիր է նոր պատժամիջոցներ սահմանել Բելառուսի նկատմամբ՝ ԵՄ-Բելառուս սահմանին միգրացիոն ճգնաժամ առաջացնելու համար:*

*ԵՄ ղեկավարության պնդմամբ, Բելառուսը անօրինական ներգաղթյալներ է ուղարկում Եվրամիության երկրներ: Եվրոպական լիդերները հայտարարել են, որ իրենց համար անընդունելի են ներգաղթյալներին քաղաքական նպատակներով օգտագործելու երրորդ երկրների փորձերը:*

ՄԱՅՐԱՔԱՂԱՔ

# ԿԱԽԱ ԿԱԼԱՁԵ. «ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԿՍԿՍՎԻ 2022 ԹՎԱԿԱՆԻՑ»

***Երկրորդ անգամ Թբիլիսիի քաղաքապետի պաշտոնում ընտրված Կախա Կալաձեն, ընտրությունների երկրորդ փուլից հետո, մայրաքաղաքի կառավարության առաջին իսկ նիստում, փոխքաղաքապետ Իրակլի Խմալաձեին կոնկրետ հանձնարարականներ տվեց: 2022 թվականի բյուջեի վերաբերյալ՝ նա հանձնարարեց հաշվի առնել նախընտրական շրջանում իր թիմի նշած կարեւոր նախագծերը:***

- Ուզում եմ դիմել փոխքաղաքապետ Իրակլի Խմալաձեին, որպեսզի Թբիլիսիի 2022 թվականի բյուջեն համապատասխանեցվի քաղաքի շահերին, եւ հաշվի առնվեն այն բոլոր նախագծերը, որոնց մասին խոսել ենք ընտրություններից առաջ: Պետք է արդեն սկսել պատրաստվել, որպեսզի հասարակությունը հաջորդ տարվանից տեսնի մեր խոստացած ծրագրերի իրականացման ծավալները ու կոնկրետ ուղիները: Կարեւոր է վթարային շենքերի փոխարինման ծրագիրը, որը մեր նախընտրական խոստումներից էր: Ցավոք, մայրաքաղաքում այդպիսի շենքեր ունենք: Հաջորդ տարվանից մենք պետք է սկսենք շենքերը նորերով փոխարինել, որպեսզի այնտեղ ապրող մարդկանց համար նորմալ կենսապայմաններ ստեղծվեն,- ասաց Թբիլիսիի քաղաքապետը եւ հավելեց, որ հարկ է հոգալ նաեւ անօթեւան քաղաքացիների մասին:

- Թբիլիսիում ունենք մոտ 400 այդպիսի ընտանիք, որոնց շնորհվել է անօթեւանի կարգավիճակ: Այս ծրագիրը սկսելու ենք իրականացնել 2022 թվականից եւ անօթեւան թբիլիսցի չենք ունենա: Համապատասխան բնակարանային ֆոնդը սկսել ենք ստեղծել տարիներ առաջ: Բոլոր անօթեւանները հնարավորինս գոհ կլինեն, եւ մենք կլուծենք այս խնդիրը,- ընդգծեց Թբիլիսիի քաղաքապետը:

Կախա Կալաձեն խոսեց նաեւ փոքր եւ միջին բիզնեսի աջակցության ծրագրի մասին եւ փոխքաղաքապետին հանձնարարեց շարունակել իրենց աջակցությունը նաեւ 2022 թվականին:

- Գոյություն ունեցող համավարակի պատճառով խիստ տուժել է փոքր եւ միջին բիզնեսը: Ուստի մենք պետք է շարունակենք նրանց աջակցությունը 2022 թվականին: Բիզնեսի աջակցությունը սկզբունքորեն կարեւոր է մեզ համար: Պետք է կարողանան աշխատողներ պահել, քանի որ այս մարդկանց թիկունքում կան կոնկրետ ընտանիքներ,- նշեց քաղաքապետը:

ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

# ՎՐԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

լով կառավարման համակարգերի ընդհանրությունները:

Իր հերթին, Մերաբ Թուրնավան շնորհակալություն հայտնելով ջերմ ընդունելության համար, նշեց, որ Վրաստանի ՍԴ նախագահի ընտրվելուց հետո սա իր առաջին արտերկրյա այցն է՝ ի վկայություն այն բանի, թե որքան է Վրաստանը կարեւորում Հայաստանի հետ բազմաոլորտ կապերի զարգացումը:

Հայաստանի վարչապետի եւ Վրաստանի սահմանադրական դատարանի նախագահի հանդիպմանն արծարծվեցին խորհրդարանական կառավարմանը եւ դրա ժողովրդավարական նշանակությանը վերաբերող հարցեր:



Վրաստանի եւ Հայաստանի սահմանադրական դատարանների ղեկավարներ Մերաբ Թուրնավայի եւ Արման Դիլանյանի հանդիպմանը՝ կողմերը պատրաստակամություն հայտնեցին շարունակել բարձր մակարդակի շփումները երկկողմանի օրակարգի բոլոր հարցերով, ու դիտարկել համատեղ տարածաշրջանային ծրագրերի իրականացումը:

# ԸՆԴԳԾՎԵՑ ԵՐԿԿՈՂՄ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՐՁՐ ԴԻՆԱՄԻԿԱՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

յանի հետ դեմ առ դեմ երկկողմ հանդիպման ընթացքում քննարկեց երկու երկրների միջեւ պաշտպանական ոլորտում առկա եւ ապագա համագործակցությունը: Կողմերն ընդգծեցին բարիդրացիական, բարեկամական հարաբերությունների, ինչպես նաեւ տարածաշրջանում խաղաղության եւ կայունության կարեւորությունը:

Հանդիպմանը քննարկվեց նաեւ տարբեր ոլորտներում հարեւան երկրների միջեւ պաշտպանության ոլորտում համագործակցության, ռազմական կրթության, ռազմական բժշկության, բազմազգ ուսուցման եւ այդ կապերի ամրապնդման հարցերը:

Վրաստանի պաշտպանության նախարարի եւ Հայաստանի վարչապետի հանդիպմանը, Նիկոլ Փաշինյանը ողջունելով հյուրին, նշեց, որ Հայաստանի եւ Վրաստանի հարաբերություններում շատ բարձր դինամիկա է արձանագրվում վերջին շրջանում եւ, որ այդ դինամիկան ամրապնդվում է պաշտպանության նախարարի այցով:

- Մենք շահագրգռված ենք Վրաստանի հետ բոլոր ոլորտներում մեր համագործակցության խորացմամբ եւ մեր եղբայրական հարաբերությունների զարգացմամբ: Իհարկե, այս կարգի այցերը, նաեւ անձնական շփումները կառավարության անդամների միջեւ, շատ կարեւոր են այդ համատեքստում,- հայտարարեց Հայաստանի վարչապետը:

Նիկոլ Փաշինյանը խնդրեց ջերմ ողջույններ փոխանցել իր գործընկերոջը՝ Իրակլի Ղարիբաշվիլուն եւ ընդգծեց, որ Վրաստանի վարչապետի, կառավարության հետ երկխոսությունը հիմնված է լիարժեք փոխվստահության վրա, ինչը լավ հենք է ռազմավարական գործակցության զարգացման համար:

Ջուանշեր Բուրճուլաձեն արդյունավետ գնահատեց Հայաստանի պաշտպանության նախարարության հետ գործակցությունը եւ դրա ընդլայնմանը միտված ծրագրերը:

Զրուցակիցները մտքեր փոխանակեցին պաշտպանական ոլորտում գործընկերության ամրապնդման եւ տարածաշրջանային նշանակության հարցերի շուրջ:

Հայաստան կատարած երկօրյա պաշտոնական այցի շրջանակներում, Վրաստանի պաշտպանության նախարար Ջուանշեր Բուրճուլաձեի գլխավորած պատվիրակությունը, Հայաստանի զինված ուժերի գլխավոր շտաբի պետի տեղակալ, գեներալ-մայոր Արայիկ Հարությունյանի ուղեկցությամբ, այցելեց Հայոց ցեղասպանության հուշահամալիր՝ հարգանքի տուրք մատուցեց Հայոց ցեղասպանության սրբադասված նահատակների հիշատակին:

Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտում պատվիրակությանը ներկայացվեց հուշահամալիրի կառուցման պատմությունը եւ հուշակոթողի խորհրդանշական իմաստը:

Շաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՎՐԱՍՏԱՆ - ԱՄՆ

# ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԵՎՈՐ ԳՈՐԾՈՆ՝ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԵՎ ԵՎՐԱՏԼԱՆՏՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

***Նոյեմբերի 4-ին Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին հանդիպում ունեցավ Հարավկովկասյան երկրներում շրջայցով գտնվող ԱՄՆ պետքարտուղարի օգնականի տեղակալ Էրիկա Օլսոնի հետ:***



Հանդիպմանը վարչապետը նշեց, որ ներկայիս աշխարհաքաղաքական միջավայրում Վրաստանի եւ ԱՄՆ-ի միջեւ ամուր գործընկերությունն ավելի կարեւոր է երկու երկրների ընդհանուր շահերի եւ եվրատլանտյան անվտանգության համար: Իրակլի Ղարիբաշվիլին նշեց, որ Վրաստանը մնում է ԱՄՆ-ի հավատարիմ եւ հուսալի դաշնակիցը տարածաշրջանում:

Հանդիպմանը քննարկվեցին Սեւ ծովի եւ Հարավային Կովկասի տարածաշրջանի անվտանգության միջավայրը եւ մարտահրավերները, Վրաստանի բռնազավթված տարածքներում տիրող իրավիճակը եւ բռնազավթումից բխող սպառնալիքները, ինչպես նաեւ հումանիտար խնդիրները, որոնց առօրյայում բախվում են բռնազավթման գծի երկու կողմերում ապրող քաղաքացիները:

Հանդիպմանը կողմերն անդրադարձան Վրաստանի եվրոպական եւ եվրատլանտյան ինտեգրման գործընթացի եւ այդ ճանապարհին իրականացվող բարեփոխումների հարցին:

Հանդիպմանը մասնակցում էին Վրաստանում ԱՄՆ-ի դեսպան Քելլի Դեգնանը եւ Վրաստանի փոխվարչապետ եւ արտաքին գործերի նախարար Դավիթ Զալկալիանին:

ԷԿՈՆՈՄԻԿԱ

# ՔՈՒԹԱՅԻՍԻՈՒՄ ԿՍԿՍՎԻ ԷԼԵԿՏՐԱՄՈԲԻԼՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ



***Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին, Քութայիսիում, տեղի բնակիչների հետ հանդիպմանը, հայտարարեց, որ մոտ ժամանակներում Քութայիսին կվերստանա իր պատմական առաքելությունը եւ քաղաքում կսկսվի էլեկտրամոբիլների արտադրությունը:***

Վարչապետի խոսքով, արդեն ներկրվել է էլեկտրամոբիլների արտադրության համար գործարանին անհրաժեշտ սարքավորումների մեծ մասը:



- Մոտ երկու տարի առաջ ծրագրվեց նախագիծ, ըստ որի, լուրջ ներդրում է իրականացվելու քաղաքում էլեկտրամոբիլների արտադրության հիմնադրման նպատակով: Թեեւ համավարակն արգելակեց այդ գործընթացը, եւ նախագծի իրականացումը ձգձգվեց:

Տեղեկացնենք, որ Քութայիսիում ինդուստրիալ համալիրի շինարարությունն իրականացնում է AIGROUP-ը: Համալիրի համար հատկացվել է 100 հեկտար հողատարածք: Առաջին նախագիծն առնչվում է էլեկտրամոբիլների թողարկմանը: Նախագիծն իրականացվում է չինական խոշոր «Չանգան» կորպորացիայի գործընկերությամբ: Նախագծի սկզբնական տարբերակի համաձայն, համալիրի լրիվ ծանրաբեռնվածության դեպքում, տարեկան արտադրվելու է շուրջ 40 հազար էլեկտրամոբիլ, ինչը նշանակում է, որ գործարանն ավելի քան 3 հազար մարդու կապահովի աշխատանքով: Նախագծի համաձայն, սկզբնական փուլում կթողարկվի չորս մոդելի էլեկտրամոբիլ: Վրացական էլեկտրամոբիլները նախատեսված են ինչպես տեղական, այնպես էլ՝ եվրոպական եւ ասիական շուկաների համար:

ՊԵՏԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

# ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՊԱԼՄԱՆ ԿՈՉԵՐԸ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ ԵՆ



***Վրաստանի պետական անվտանգության ծառայությունը հանդես է եկել հատուկ հայտարարությամբ, որտեղ ասված է, որ վերջին ժամանակներում տարածվում են իրավախախտման բովանդակությամբ հայտարարություններ:***

Կանխամտածված կամ ոչ գիտակցորեն իշխանության տապալման կոչեր են արվում, որոնք ենթադրում են հանցագործություն:

«Հանրությունը տեղեկացված է, որ անվտանգության ծառայությունը հետաքննություն է վարում իշխանության տապալման նպատակով դավադրության փաստով: Վերջին ժամանակներում սոցիալական ցանցերում եւ տարբեր լրատվամիջոցներում տարբեր անձանց կողմից տարածվում են իրավախախտում բովանդակող հանրային հայտարարություններ, որոնք միտված են բռնությամբ հեղափոխություն իրականացնելուն եւ իշխանության տապալմանը»,- ասված է հայտարարության մեջ:

Պետական անվտանգության ծառայությունը զգուշացնում է, որ իշխանության բռնի տապալման կոչերը իրավախախտում են եւ պատժվում են օրենքով:

«Պետանվտանգության ծառայությունը, Վրաստանի սահմանադրական կարգի պահպանմամբ եւ իր իրավասության շրջանակներում կիրականացնի իրավական բոլոր միջոցառումները՝ ոչ սահմանադրական ճանապարհով Վրաստանում բռնի ուժով իշխանափոխությունը կանխելու համար»,- ասված է հայտարարության մեջ, որտեղ ապակայունացնող ուժերին կոչ է արվում զերծ մնալ հանցագործ գործունեությունից:



## ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄԸ ԲԱՐԵԼԱՎՎԵԼ Է

*Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկը («EBRD») երեք տոկոսային կետով բարելավել է Վրաստանի 2021 թվականի տնտեսական աճի կանխատեսումը:*

*Միջազգային ֆինանսական ինստիտուտն այս տարի Վրաստանում ակնկալում է 7,5 տոկոս տնտեսական աճ:*

*«EBRD»-ը Վրաստանում 2022 թվականի կանխատեսումը թողել է անփոփոխ, եւ կազմակերպությունը դեռ ակնկալում է 5,5 տոկոս տնտեսական աճ:*

*Նշենք, որ ֆինանսական հաստատությունը տարածաշրջանում ամենաբարձր տնտեսական աճը 2021 թվականին ակնկալում է Վրաստանում:*

## ՊԱՐՏԱԴԻՐ ՏԵԽԶՆՆՈՒՄ ԱՆՑՆՈՂ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԹԻՎԸ ՆՎԱԶՈՒՄ Է

*2021 թվականի ինն ամիսներին տրանսպորտային միջոցների պարտադիր տեխզննում է անցել 430 464 ավտոմեքենա: Ամենամյա տեխզննում անցնող մեքենաների թիվը գնալով նվազում է:*

*Վրաստանի ավտոտեխզննման կենտրոնների ասոցիացիայից պահանջված վիճակագրական տվյալների համաձայն, 2019 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ՝ այն նվազել է 167 451-ով:*

*2019 թվականի հունվար-սեպտեմբերին ստուգվել է 597 915 ավտոմեքենա:*

*Ներքին գործերի նախարարության պաշտոնական տվյալներով, 2021 թվականի հոկտեմբերի 31-ի դրությամբ «ակտիվ» կարգավիճակով հաշվառված տրանսպորտային միջոցների թիվը 993 337 է:*

## ԻՆԳՈՒՐԻԻ ԿԱՄՈՒՐՋԸ ԿՐԿԻՆ ՓԱԿՎԵԼ Է

*Վրաստանի կողմից չվերահսկվող Աբխազիայի դե-ֆակտո կառավարությունը միակողմանիորեն փակել է Ինգուրիի կամուրջը, որն Աբխազիան կապում է Վրաստանին: Շրջանի բնակիչներին թույլ չեն տալիս մուտք գործել կենտրոնական կառավարության կողմից վերահսկվող տարածք, մինչդեռ ներկայումս տարածքում գտնվողները կարող են Սամեգրելոյի շրջանից վերադառնալ Աբխազիա:*

*Վրաստանի պետական անվտանգության ծառայության տվյալներով, սահմանափակումը ժամանակավոր է:*

ՀՐԱՏԱՊ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

# ՄԱՐԻ ՄԻԿՈՅԱՆ. «ՊԱՏՎԱՍՏՈՒՄԸ ՈՉ ՄԻԱՅՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ Է, ԱՅԼԵՎ ԲՆԱԿԱՆՈՆ ԿՅԱՆՔ ՎԵՐԱԴԱՌՆԱԼՈՒ ՄԻԱԿ ԽԱՆԱՊԱՐՀԸ»

## ԵՐԵԿ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ԳՐԱՆՑՎԵԼ Է ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻՑ ՄԱՀՎԱՆ ՌԵԿՈՐԴԱՅԻՆ՝ 62 ԴԵՊՔ, ՊԱՏՎԱՍՏՎԱԾ ՉԵՆ ԵՂԵԼ ԳՐԵԹԵ ԲՈԼՈՐԸ

***Վրաստանի բնակչության ընդհանուր թիվն անցնում է երեք միլիոնի սահմանները: Նոյեմբերի 5-ի առավոտյան տվյալներով լիարժեք պատվաստված են 1 995 150-ը, այդ թվում՝ 12-15 տարեկան 106 երեխա: Վերջին շրջանում հատկապես, պատվաստումների օրական թիվը կտրուկ նվազել է՝ տատանվելով 3-4 հազարի միջեւ, մինչդեռ օգոստոս-սեպտեմբեր ամիսներին հասնում էր 30 հազարի: Ցավոք, նվազումը գրանցվեց հենց ամենաորոշիչ պահին, երբ վերսկսվեց բնակչության ակտիվ տեղաշարժն ու նվազագույնի հասան սահմանափակումները, ինչը բնական է, հանգեցրեց համավարակի 5-րդ ալիքի ակտիվացմանը՝ վարակման ու մահերի թվերի աճին:***

Վրաստանի Հիվանդությունների վերահսկման ազգային կենտրոնը, առաջատար համավարակաբանները, իսկ օրերս արդեն երկրի նախագահը կառավարությանը հորդորում են դիմել խիստ միջոցների եւ առկա իրավիճակի սրությունը նվազագույնի հասցնելու համար խթանել պատվաստման գործընթացը՝ նոր սահմանափակումների կիրառմամբ ու Կանաչ անձնագրի ներդրմամբ: Վրաստանի մասնագետներն ահազանգում են, որ իրավիճակը մտահոգիչ է հատկապես շրջաններում:

**- Հետաքրքիր է, որ, ըստ վիճակագրության, ամենից քիչ պատվաստվում են հենց ազգային փոքրամասնություններով հոծ շրջաններում,** - *«Վրաստանի» հետ զրույցում ասում է Վրաստանի արտակարգ իրավիճակների համակարգման եւ անհետաձգելի բուժօգնության ծառայության աշխատակից Մարի Միկոյանը, ով օրերս վերադարձել է Սամցխե-Ջավախեթիի տարածաշրջանից:*- **Կուզեի հատուկ անդրադառնալ «Վրաստան» թերթին, գիտեմ, որ համավարակի սկզբից մեծ դերակատարում ունեք վարակի ու նրա դեմ պայքարի հնարավոր միջոցների մասին խոսելու ու քարոզելու մեջ՝ այդ թեմային յուրաքանչյուր համարի մեկ էջը տրամադրելով: Գիտեմ նաեւ, որ ձեզ շատ են կարդում հատկապես մեր երկրի հայահոծ շրջաններում: Ուստի անկեղծ զարմանում եմ, որ հետեւողական չեն ու հաճախ չեն հետեւում ամենատարրական կանոններին:**

**Զարմանալիորեն բնակչության մեծամասնությունը չի կրում նույնիսկ դիմակ, շարունակում կազմակերպել մարդաշատ հարսանիքներ ու սգո արարողություններ: Դե, իսկ պատվաստման գործընթացն ընդհանրապես անտեսվում է: Օրինակ, հոկտեմբերի 20-ին Սամցխե-Ջավախեթիում պատվաստվել է ընդամենը 131 մարդ, ընդհանուր՝ 36 418, այսինքն՝ բնակչության 0, 019 տոկոսը: Մինչդեռ վարակվածների ցուցանիշն այսօր աննախադեպ աճ է գրանցում, իսկ գաղտնիք չէ, որ հենց բարձրադիր շրջաններում է բժշկական օգնությունը հաճախ ոչ ժամանակին հասնում:**

(Շարունակությունը՝ 5-րդ էջում)

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

# ՍԱԼՈՄԵ ԶՈՒՐԱԲԻՇՎԻԼԻ. «ԲԵՎԵՌԱՑՈՒՄԸ ԿԱՐԵԼԻ Է ՀԱՂԹԱՀԱՐԵԼ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՄԲ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

որ առողջապահական աղետից խուսափելը, սոցիալ-տնտեսական մարտահրավերների հաղթահարումը, եվրաինտեգրման արդյունավետ միջոցը, սա ոչ կուսակցական մարտահրավեր է, դրա շուրջ համաձայնությունը պատասխանն է, թե ինչպես վերջ տալ ոչ բեւեռացմանը:

- Ճիշտ է, նախընտրական քարոզարշավն անցավ այնպես, որ միմյանց նկատմամբ ատելությունն ու անպատվելը շատ ավելին էին, քան իրական խնդիրների քննարկումը, գործնականում անտեսվեցին երկրի իրական կարիքները եւ քաղաքացիների սոցիալ-տնտեսական ծանր վիճակը: Մի կողմից, իշխանությունը գոհ է տնտեսական աճի աննախադեպ տեմպերից, մինչդեռ քաղաքացիները պայմանների կտրուկ վատթարացում են ապրում: Ընդդիմությունն առաջնորդվում էր բոլորովին այլ նեղ քաղաքական առաջնահերթություններով: Փաստն այն է, որ ո'չ տեղական ինքնակառավարման զարգացումը, ո'չ էլ տնտեսական ճգնաժամի հաղթահարումը կողմերի օրակարգային կարեւոր խնդիր չեն եղել: Բեւեռացման հաղթահարումը հնարավոր կլինի միայն այն դեպքում, եթե երկիրը, կուսակցությունները, ընդդիմությունը կամ մեծամասնությունը վերադառնան իրական խնդիրների եւ մարտահրավերների լուծմանը,- հայտարարեց նախագահը՝ հավելելով, որ սա մեր ընդհանուր, ապակուսակցական մարտահրավերն է ոչ միայն այն պատճառով, որ դա մեր հայտարարած կողմնորոշումն է, ոչ թե այն պատճառով, որ երկրի 80 տոկոսը պաշտպանում է այս ճանապարհը, այլ այն պատճառով, որ դա մեր սոցիալական, տնտեսական, պետական զարգացման միակ ճանապարհն է:

- Դրա շուրջ համաձայնությունը էական հարցի պատասխանն է, թե ինչպես վերջ տալ ոչ թե միմյանց, այլ բեւեռացմանը,- ասաց Սալոմե Զուրաբիշվիլին:

### ԸՆԴԴԻՄՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԱՏ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԱՐԳԱՍԻՔ ԵՆ

Երկրի նախագահը՝ Օրբելիանիների պալատի նստավայրում կայացած ճեպասուլիսում հայտարարեց, որ ընտրություններն անցել են ազատ, ընդդիմության զգալի բարելավված արդյունքներն ուղղակիորեն կապված են ընտրողների ազատ արտահայտման հետ:

Նա շնորհավորեց սակրեբուլոների նորընտիր անդամներին, քաղաքապետերին՝ ինքնակառավարման մարմինների ընտրություններում տարած հաղթանակի կապակցությամբ, մաղթելով հաջողություններ:

- Ընտրությունները, կարելի է ասել, խաղաղ են անցել, քանի որ հենց տեղամասերում միջադեպերն աննախադեպ ցածր են եղել: Ընտրություններն անցկացվել են ազատ, ընդդիմության համար զգալիորեն բարելավված արդյունքներով, որոնք ուղղակիորեն կապված են ընտրողների ազատ արտահայտման հետ: Նաեւ թեկնածուների արդյունքների միջեւ տարբերությունը նվազեցնելը բնորոշ է ժողովրդավարական ընտրություններին,- նշեց Սալոմե Զուրաբիշվիլին:

Անդրադառնալով հետընտրական իրավիճակի գնահատմանը, երկրի նախագահը ընդգծեց, որ ընտրություններն ավարտվել են, բայց ոչ ոք իրեն իրական հաղթող պետք է չհամարի, քանի որ հաղթողը ո'չ երկիրը, ո'չ հասարակությունն է: Երկրին պետք է հանգստություն եւ կայունություն՝ զարգացման ուղի վերադառնալու համար:

- Մի կողմից կենտրոնանալով այն հիմնական հարցերի վրա, որոնք ոչ մի ուժ չի կարող հաղթահարել, իսկ մյուս կողմից՝ վերջ տալ ապակայունացմանը, քանի որ ապակայունացումը ձեռնտու է միայն արտաքին ուժերին,- հայտարարեց Սալոմե Զուրաբիշվիլին:

### ՍԱԱԿԱՇՎԻԼՈՒՆ ՀԱՄԱՆԵՐՈՒՄ ՉԻ ՇՆՈՐՀՎԻ, ՆԱ ԲԱՑԱՌԻԿ ԲԱՆՏԱՐԿՅԱԼ Է

Անդրադառնալով Վրաստանի երրորդ նախագահ Միխեիլ Սաակաշվիլուն համաներում հայտարարելու հարցին, Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին անվերապահ հայտարարեց, որ նախկին նախագահին համաներում շնորհելու վերաբերյալ իր դիրքորոշումը հաստատուն է եւ անփոփոխ, ոչ եւ երբեք:

- Նախկին նախագահը չի համապատասխանում քաղաքական բանտարկության կամ անմեղության զոհի չափանիշներից որեւէ մեկին: Նա կամավոր եւ ապօրինի երկիր մուտք գործած դատապարտյալ է, ում մուտքը ապակայունացման նպատակ ուներ: Ես երբեք նորից չեմ անդրադառնա այս հարցին,- ասաց Սալոմե Զուրաբիշվիլին:

ԽՈՐՀՐԴԱՐԱՆ

# ԸՆԴԴԻՄՈՒԹՅԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ ԲՈՅԿՈՏԸ ՕՐԵՆՍԴԻՐ ՄԱՐՄՆՈՒՄ

***Ինչպես արդեն հաղորդել ենք, հոկտեմբերի 2-ին եւ 30-ին երկու փուլով անցկացված տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին՝ քաղաքացիները ձայների մեծամասնությամբ պաշտպանեցին կառավարող թիմի՝ «Վրացական երազանքի» նախընտրական ծրագիրն ու աջակցեցին այդ կուսակցության կողմից առաջադրված մունիցիպալիտետների եւ սակրեբուլոների մեծամասնական պատգամավորների թեկնածուներին:***

Սպասելիքներում հուսախաբված ընդդիմությունը, այս անգամ, որպես պատրվակ օգտագործում է Վրաստանի երրորդ նախագահ Միխեիլ Սաակաշվիլու ձերբակալության եւ վերջինիս կողմից հայտարարած հացադուլի արդյունքում նրա առողջական վիճակի վատթարացման ու քաղաքային հիվանդանոց տեղափոխելու հարցը:

Այսպես, նոյեմբերի 1-ին Սաակաշվիլին նամակով դիմել է ընդդիմադիր պատգամավորներին՝ կոչ անելով լքել խորհրդարանը՝ հավելելով, որ Վրաստանի ներկայիս կառավարությունն ընդդիմության «ձեռքից խլել է» ընտրություններում հաղթելու հնարավորությունը:

Խորհրդարանի աշխատանքը բոյկոտի ենթարկելու առաջարկության ընդունմանը զուգընթաց, Վրաստանում ընդդիմադիր «Միացյալ ազգային շարժման» անդամ Էկա Խերխեուլիձեն նշեց, որ ընդդիմությունը չի կարող մի կողմ քաշվել ծրագրված սահմանադրական փոփոխությունների, մասնավորապես՝ ընտրական շեմը 5 տոկոս իջեցնելու հարցի քննարկումից եւ ընդունումից: Դրա վկայությունն է նաեւ «Լելո-գործընկերություն՝ հանուն Վրաստանի» խորհրդարանի պատգամավորներ Սալոմե Սամադաշվիլու եւ Աննա Նացվլիշվիլու հայտարարությունը, ըստ որի, չնայած խմբակցությունը հայտարարել է, որ չի մասնակցելու խորհրդարանի լիագումար նիստերին, այդուհանդերձ, խմբակցությունը կմասնակցի միայն սահմանադրական փոփոխությունների քննարկմանը:

Խորհրդարանի մի քանի պատգամավորներ արդեն հայտարարել են պատգամավորական մանդատից հրաժարվելու մասին:

Մասնավորապես, «Գիրչի՝ հանուն ավելի շատ ազատության» նախագահ Զուրաբ Ջափարիձեն, «Լելոյի» նախագահ Մամուկա Խազարաձեն պաշտոնապես դիմել են խորհրդարանին՝ կասեցնելու իրենց պատգամավորական մանդատը:

Նրանք դիմումները ներկայացրել են օրենսդիր մարմնի ընթացակարգային հարցերի կոմիտեին: Կոմիտեն դիմումը քննարկելու համար ունի 15 օր ժամկետ, որից հետո հարցը կուղարկվի լիագումար նիստ, որտեղ որոշում կկայացվի որոշման նախագծով: Պատգամավորական մանդատը դադարեցնելու համար անհրաժեշտ է 51 պատգամավորի ձայն:

Հիշեցնենք, որ Զուրաբ Ջափարիձեն երկրորդ անգամ է դիմել խորհրդարան՝ դադարեցնելու իր պատգամավորական մանդատը: Դիմումի բավարարման դեպքում, նրան կփոխարինի ցուցակում հաջորդող Հերման Սաբոն, իսկ ինչ վերաբերում է Մամուկա Խազարաձեին, ապա, «Լեոյի» կողմից համամասնական ցուցակների չեղարկման դեպքում, նման հաջորդականություն չի լինի:

Ինչ վերաբերում է ընդդիմության կողմից խորհրդարանի բոյկոտին վերաբերող կառավարող թիմի արձագանքին, ապա, ըստ «Վրացական երազանքի» նախագահ Իրակլի Կոբախիձեի, խորհրդարանն անվերապ կքննարկի բոլոր դիմումները եւ կբավարարի դրանք:

- Այդ մարդիկ թող իրենց ընտրողներին պարզաբանեն, թե ինչու չարդարացրին նրանց վստահությունը,- հայտարարեց Իրակլի Կոբախիձեն:

ՏԵՂԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

# ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԻՆԳ ՔԱՂԱՔՆԵՐԻ ԵՎ 14 ՄՈՒՆԻՑԻՊԱԼԻՏԵՏՆԵՐԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԵՐԸ «ՎՐԱՑԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔԻ» ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐՆ ԵՆ

***Հոկտեմբերի 30-ին Վրաստանի հինգ ինքնակառավարման քաղաքներում (Թբիլիսի, Բաթումի, Ռուսթավի, Քութայիսի, Փոթի) եւ 15 մունիցիպալիտետներում անցկացվեց քաղաքապետի եւ տեղական սակրեբուլոների 42 մեծամասնական պատգամավորների ընտրության երկրորդ փուլ:***

Ինքնակառավարման բոլոր հինգ քաղաքներում եւ 14 մունիցիպալիտետներում քաղաքապետեր ընտրվեցին կառավարող «Վրացական երազանք» կուսակցության թեկնածուները (բացառություն կազմեց միայն Ծալենջիխայի մունիցիպալիտետը, որտեղ քաղաքապետ ընտրվեց «Միասնական ազգային շարժման» թեկնածուն): Ինչ վերաբերում է սակրեբուլոների մեծամասնական պատգամավորների ընտրությանը, ապա այստեղ էլ մեծամասամբ հաղթեցին կառավարող թիմի ներկայացուցիչները, թեեւ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի տվյալներով, ընդդիմությունը մեծամասնություն է ստացել Բաթումիի, Զուգդիդիի, Մարտվիլիի, Չխորոծղուի, Ծալենջիխայի եւ Ռուսթավիի քաղաքային սակրեբուլոներում եւ «Վրացական երազանք» կուսակցության նախագահ Իրակլի Կոբախիձեի հայտարարությամբ, այն սակրեբուլոներում, որտեղ կառավարող թիմը մեծամասնություն չունի, այն կձեւավորվի սակրեբուլոյի անդամների հետ բանակցությունների արդյունքում:

ԿԸՀ-ի տվյալներով, Վրաստանում տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների երկրորդ փուլին մասնակցել է 1 024 406 ընտրող, որը կազմում է գրանցված ընտրողների 49,9 տոկոսը:

# ՔՎԵԱԹԵՐԹԻԿՆԵՐԻ ՎԵՐԱՀԱՇՎԱՐԿՈՒՄԸ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ ՉԳՈՐԾԵՑ




***Նոյեմբերի 1-ին, Ընտրական օրենսգրքում ընդունած փոփոխությունների համաձայն, վիճակագրությամբ ընտրված մի շարք ընտրատեղամասերում անցկացվեց քվեաթերթիկների վերահաշվարկում:***

Վրաստանի Կենտրոնական ընտրական հանձնաժողովի հրապարակած տեղեկատվության համաձայն, վերահաշվարկումը անց է կացվել 1830 ընտրատեղամասերի վիճակագրությամբ ընտրված 11 տոկոսի տեղամասում: Վերահաշվարկման արդյունքում ողջ Վրաստանում «Ազգային շարժումը» քաղաքապետի ընտրություններում կորցրել է 21 ձայն եւ ստացել 28-ը, «Վրացական երազանքը» կորցրել է 10 ձայն եւ ավելացրել 23, «Թամազ Մեճիաուրին՝ հանուն միասնական Վրաստանին» ավելացել է երկու ձայն:

Ըստ ԿԸՀ-ի եզրահանգման, վերահաշվարկը չի ազդել երկրորդ փուլի արդյունքների վրա:

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

# ՄԵԼՔՈՆ ՄԱԿԱՐՅԱՆԸ ՍՏԱՆՁՆԵՑ ԱԽԱԼՔԱԼԱՔԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

նահանգապետ Բեսիկ Ամիրանաշվիլին, Վրաստանի խորհրդարանի Ախալքալաքիի եւ Նինոծմինդայի մեծամասնական պատգամավոր Սամվել Մանուկյանը, տարածաշրջանի ընտրական հանձնաժողովի նախագահ Համիկ Մառանգոզյանը, Ախալքալաքիի մունիցիպալիտետի նախկին քաղաքապետ Յուրի Ունանյանը, մունիցիպալիտետի քաղաքապետարանի եւ սակրեբուլոյի ներկայացուցիչները:

Միջոցառմանը ելույթ ունեցան Բեսիկ Ամիրանաշվիլին, Համիկ Մառանգոզյանը, Յուրի Ունանյանը, ովքեր նորընտիր քաղաքապետին շնորհավորեցին ընտրություններում հաղթելու կապակցությամբ եւ հաջողություններ մաղթեցին աշխատանքում:

Ախալքալաքիի քաղաքապետ Մելքոն Մակարյանը շնորհակալություն հայտնեց ներկաներին իրեն վստահելու համար.

# ԻՐԱԿԼԻ ԼԱԶԱՐԱՇՎԻԼԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑ ՈՐՊԵՍ ԱԽԱԼՑԻԽԵԻ ՄՈՒՆԻՑԻՊԱԼԻՏԵՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Նշենք, որ հոկտեմբերի 28-ին տեղի ունեցավ Ախալցիխեի մունիցիպալիտետի նորընտիր քաղաքապետ Իրակլի Լազարաշվիլու ներկայացման արարողությունը: Միջոցառմանը ներկա էր եւ նորընտիր քաղաքապետին շնորհավորեց Սամցխե-Ջավախեթիի տարածաշրջանի պետական լիազորնահանգապետ Բեսիկ Ամիրանաշվիլին:

Իրակլի Լազարաշվիլին շնորհակալություն հայտնեց շնորհավորանքի համար եւ խոսեց առաջիկա անելիքների մասին՝ նշելով, որ ինքը, մինչեւ ընտրությունը, պետական գույքի ազգային գործակալության Սամցխե-Ջավախեթիի երկրամասային դեպարտամենտի ղեկավարի պաշտոնում աշխատանքի ընթացքում մանրամասն ծանոթացել է տեղի բնակչությանը հուզող հիմնախնդիրներին եւ հնարավորինս նպաստելու է դրանց կարգավորմանը:

*Էջը պատրաստեց Յուրի Խորենյանը*